

Հավելված N 1
14. 06. 2019թ.
N 59 հրամանի


Կազմված է 14. 06. 2019թ.
Բաղկացած է 11 թերթից

ՍՏԵՂԾՎԱԾ Է
«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Տնօրենների խորհրդի
29. 05. 2019թ.
N 208 որոշմամբ

Տպագրված է ընդամենը 5 օրինակ

Օրինակ 1

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրենի պաշտոնակատար-
յունները Գլխավոր տնօրենի
Ֆինանսային և Կապիտալի
Ֆինանսային Դեպարտամենտի
Վարչի պաշտոնակատարի
14. 06. 2019թ.
Կ.Տ.



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության
«Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկի

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Հիմնադիր) «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկը (այսուհետ՝ Հիմնարկ), իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որը ստեղծվել է սույն կանոնադրությամբ նախատեսված սոցիալ-մշակութային, կրթական, սպորտային և ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար:

2. Հիմնարկը հանրակրթական հիմնական (նախադպրոցական կրթական, տարրական, հիմնական և միջնակարգ), լրացուցիչ և այլ ծրագրերի ուսուցում, այդ թվում՝ խորացված, ինչպես նաև ֆիզիկական դաստիարակության և սպորտային, մշակութային և երիտասարդական ծրագրեր իրականացնող կազմակերպություն է:

3. Հիմնարկը ստեղծվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տնօրենների Խորհրդի 2019 թվականի մայիսի 29-ի N208 Որոշմամբ:

4. Հիմնարկն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, Հիմնադրի ներքին իրավական ակտերով, այլ կազմակերպակարգադրական փաստաթղթերով և սույն կանոնադրությամբ:

5. Հիմնարկի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ.

2) հայերեն կրճատ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Ուսումնա-սպորտային համալիր» հիմնարկ.

3) ռուսերեն լրիվ՝ Учреждение «Учебно-спортивный комплекс» закрытого акционерного общества «Газпром Армения».

4) ռուսերեն կրճատ՝ Учреждение «Учебно-спортивный комплекс» ЗАО «Газпром Армения».

5) անգլերեն լրիվ՝ «Educational-sport complex» enterprise of closed type joint-stock company «Gazprom Armenia».

6) անգլերեն կրճատ՝ «Educational-sport complex» enterprise of «Gazprom Armenia» CJSC.

6. Հիմնարկի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Ծառավ Աղբյուր փող. 55/25

7. Հիմնադրի անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն.

2) հայերեն կրճատ՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ.

3) ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «Газпром Армения».

4) ռուսերեն կրճատ՝ ЗАО «Газпром Армения».

5) անգլերեն լրիվ՝ «Gazprom Armenia» Closed Type Joint-Stock Company.

6) անգլերեն կրճատ՝ «Gazprom Armenia» CJSC.

8. Հիմնադրի գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Թբիլիսյան խճուղի 43:

II. ՀԻՄՆԱՐԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

9. Հիմնարկի գործունեության առարկան և նպատակն է՝ նախադպրոցական կրթական, հանրակրթական հիմնական (ընդհանուր), կրթական պետական և լրացուցիչ ծրագրերի կազմակերպչական, սպորտային և ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելը, ինչպես նաև բնակչության լայն շերտերի շրջանում մարմնակրթության խթանումն ու զարգացումը:

10. «Ուսումնա-սպորտային համալիր» Հիմնարկը կրթական և սպորտային գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության.

1) համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է Հիմնարկում ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքային տարրական կարողությունների ու հմտությունների ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցման նախապատրաստումը.

2) ապահովում է աշակերտների կողմից հանրակրթական ծրագրերի բովանդակության պարտադիր նվազագույնի յուրացումը, անհատի բազմակողմանի զարգացումը, պայմաններ է ստեղծում ինքնակրթության և լրացուցիչ (նախասիրական, նախամասնագիտական) կրթության պահանջումներին բավարարման համար.

3) սպորտային գործունեությունն իրականացնում է բնակչության շրջանում սպորտով զբաղվելը խթանելու համար:

11. Հիմնարկի սպորտային համալիրի կողմից իրականացվող գործունեության տեսակներն են.

1) Առողջության ամրապնդմանը նպաստող տարբեր մարզաձևերի, խմբերի և դասընթացների գործունեության կազմակերպումը.

2) տարբեր մարզաձևերից մրցումների, սպարտակիադաների անցկացումը.

3) մարզամշակութային միջոցառումների կազմակերպումը.

4) խաղահրապարակների, տարբեր տաղավարների, մարզական պարագաների վարձույթի կետերի կազմակերպումը.

5) օրենքով չարգելված այլ գործունեության իրականացումը:

12. Իր առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացման համար Հիմնարկը՝

1) իր կողմից կնքված պայմանագրերի ու համաձայնագրերի հիման վրա իրականացնում է երկկողմանի ու բազմակողմանի կապեր հանրապետության ու օտարերկրյա մարզական և այլ կազմակերպությունների, իրավաբանական և ֆիզիկական անձանց հետ.

2) պայմանագրային հիմունքներով ներգրավում է այլ կազմակերպությունների և անհատների.

13. Հիմնարկն իր գործունեության իրականացման նպատակով՝

1) կազմակերպում է Հիմնարկի ընթացիկ գործունեությունը.

2) նախապատրաստում ու սահմանված կարգով կնքում է Հիմնարկի գործունեության հետ կապված պայմանագրեր.

3) կատարում է Հիմնարկի գործունեության հետ կապված վճարային հաշվարկներ և վճարումներ.

4) կազմակերպում է Հիմնարկի նախակրթարանում (մանկապարտեզում) երեխաների և դպրոցական աշակերտների ընդունելությունը.

5) Հիմնադրի հանձնարարականների և առաջադրանքների հիման վրա իրականացնում է Հիմնարկի գործունեության հետ կապված այլ գործառույթներ:

14. Սույն կանոնադրությամբ չնախատեսված առևտրային և ոչ առևտրային բնույթի այլ գործունեության տեսակներով Հիմնարկը կարող է զբաղվել միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Հիմնադրի հանձնարարությամբ կամ նրա համաձայնությամբ:

15. Հիմնարկը բնակչության շրջանում մարզական, առողջարարական նպատակով գործունեություն կարող է իրականացնել վճարովի հիմունքներով միայն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, Հիմնադրի որոշման հիման վրա:

16. Հիմնարկը լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կարող է զբաղվել միայն Հիմնադրին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված լիցենզիաների հիման վրա:

III. ՀԻՄՆԱՐԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17. Հիմնարկն իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն է, որն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, Հիմնադրի ներքին իրավական ակտերի և սույն կանոնադրության հիման վրա:

18. Հիմնարկը ենթակա է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական հաշվառման:

19. Հիմնարկն ունի իր գործունեության իրականացման համար անհրաժեշտ՝ Հիմնադրի կողմից իրեն հանձնված (ամրացված) գույք, հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով կլոր կնիք, ձևաթուղթ, ընթացիկ հաշիվներ բանկերում և ինքնուրույն հաշվեկշիռ, ինչպես նաև Հիմնադրին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված լիցենզիաներ:

20. Հիմնարկը սույն կանոնադրությամբ նախատեսված գործունեության իրականացման համար, սույն կանոնադրությանը և Հիմնադրի հանձնարարականներին համապատասխան, իրավունք ունի Հիմնադրի անունից՝

1) ձեռք բերել և իրականացնել գույքային ու անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ.

2) դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող.

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել

պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային), կատարել գործարքներ.

4) իրականացնել իր կանոնադրական նպատակներից բխող այլ իրավունքներ:

21. Հիմնարկը պարտավոր է՝

1) ապահովել Հիմնադրի կողմից իրեն հանձնված (ամրացված) գույքի պահպանությունը, օրենքով սահմանված շրջանակներում, իր գործունեության նպատակներին, Հիմնադրի հանձնարարություններին և իրեն ամրացված գույքի նշանակությանը համապատասխան տիրապետել, օգտագործել և տնօրինել այդ գույքը.

2) պատշաճ կատարել պայմանագրային պարտավորությունները այլ անձանց հետ հարաբերություններում.

3) օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով վարել իր գործունեության արդյունքների հաշվառում, ներկայացնել հաշվապահական, ֆինանսական, վիճակագրական և օրենսդրությամբ սահմանված այլ հաշվետվություններ.

4) ապահովել Հիմնարկի կանոնադրության, գույքի նկատմամբ իրավունքները հաստատող և հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, Հիմնադրի և Հիմնարկի ներքին իրավական ակտերի, օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի պահպանությունը.

5) ապահովել Հիմնարկի կողմից լիցենզավորման ենթակա գործունեության իրականացման ընթացքում Հիմնադրին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրված լիցենզիաների պահանջները և պայմանները.

6) կատարել իր կանոնադրական նպատակներից բխող այլ պարտականություններ:

22. Հիմնարկը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական և հանրակրթական պետական ծրագրերին, սովորողների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առաձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության և առողջության պահպանման համար:

23. Հիմնարկի կողմից հանրակրթություն իրականացնելիս հանրակրթական հիմնական ծրագրերը, որպես անբաժանելի մաս, կարող են ներառել՝

1) ուսումնամեթոդական, փորձարարական հետազոտական աշխատանքները.

2) մանկավարժական աշխատողների մասնագիտական կատարելագործման միջոցառումները.

3) սովորողների համար հանրակրթական լրացուցիչ դասընթացների կազմակերպումը.

4) սովորողների առողջության պահպանման միջոցառումները.

5) սովորողների սննդի կազմակերպումը.

6) սովորողների՝ տրանսպորտային կազմակերպված փոխադրումները.

7) սովորողների երկարօրյա ուսուցման և (կամ) գիշերակացի կազմակերպումը.

8) ուսումնաարտադրական բազաներում, մարզատողչարարական ճամբարներում սովորողների ուսուցման, դաստիարակության ու հանգստի կազմակերպումը:

24. Հիմնարկը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) լրացուցիչ հանրակրթական և մարզական ծրագրերի իրականացում.

2) համակարգչային ծրագրերի և լեզուների լրացուցիչ ուսուցման կազմակերպում.

3) արտադրարոցական դաստիարակության կազմակերպում.

4) սովորողների սննդի կազմակերպում:

25. Հիմնարկի պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում Հիմնադիրը՝ օրենքով սահմանված կարգով:

IV. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

26. Հիմնարկն իր կողմից իրականացվող ծրագրերին համապատասխան բաժանվում է նախակրթարանի (մանկապարտեզի), դպրոցի և սպորտային համալիրի:

27. Հիմնարկի նախակրթարանի (մանկապարտեզի) երեխաների համակազմի համալրման կարգը և խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

28. Նախակրթարանի (մանկապարտեզի) կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան:

Հիմնարկը կարող է մշակել և, Նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

29. Նախակրթարանի (մանկապարտեզի) աշխատանքային ռեժիմը, Հիմնարկում երեխաների մնալու տևողությունը, կրթադաստիարակչական խմբերի համալրման և սննդի կազմակերպման կարգը որոշում է Հիմնարկը՝ Նախարարության մեթոդական ցուցումներին համապատասխան:

30. Միջնակարգ (լրիվ) կրթությունն իրականացվում է եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում (այսուհետ՝ դպրոց)՝ 12 տարի ընդհանուր տևողությամբ, հետևյալ հաջորդական աստիճաններով՝

- տարրական դպրոց (1-4-րդ դասարաններ)
- միջին դպրոց (5-9-րդ դասարաններ)
- ավագ դպրոց (10-12-րդ դասարաններ):

31. Հիմնարկում ուսուցումն իրականացվում է գրական հայերենով՝ «Լեզվի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

32. Սովորողների ուսումնական առաջադիմության ընթացիկ և ամփոփիչ (կիսամյակային և տարեկան) գնահատումը, դրանց ձևերի, մեթոդների, հաճախականության, առաջադրանքների բովանդակության ընտրությունը կատարում է Հիմնարկը՝ հանրակրթության պետական չափորոշիչին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

33. Տարրական, հիմնական և միջնակարգ հանրակրթական ծրագրերի ավարտին իրականացվում է հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին սովորողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների համապատասխանության ստուգում՝ պետական ամփոփիչ ատեստավորում և, ըստ կրթության մակարդակների, տրվում է հանրակրթական ծրագրերի յուրացումը հավաստող ավարտական փաստաթուղթ՝ վկայական կամ ատեստատ:

34. Հիմնարկի դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրանում է մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ:

35. Հիմնարկի դպրոցում ուսումնական տարին սկսվում է սեպտեմբերի 1-ից:

36. Ուսումնական տարվա ընթացքում հանրակրթության պետական չափորոշիչի պահանջներին համապատասխան նախատեսվում են աշնանային, ձմեռային, գարնանային և ամառային արձակուրդներ: Արձակուրդների ժամկետները և տևողությունը սահմանում է Հիմնադիրը՝ այդ մասին տեղյակ պահելով Նախարարությանը:

37. Հիմնարկի դպրոցի ուսումնական պլաններում առանձին առարկաներին հատկացվող ժամերի քանակը չպետք է պակաս լինի Նախարարության կողմից հաստատված օրինակելի ուսումնական պլանով նախատեսված ժամերի քանակից:

38. Հիմնարկի դպրոցից սովորողին այլ դպրոց տեղափոխելը և (կամ) ազատելը կատարվում են Նախարարության կողմից սահմանված կարգով՝ հետևյալ դեպքերում.

- 1) ծնողի դիմումի հիման վրա.
- 2) ծնողի հետ կնքած պայմանագրում նշված պայմանների խախտման դեպքում՝ պայմանագրի երկկողմանի կամ միակողմանի դադարեցման հիման վրա.
- 3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտի հիման վրա:

V. ՀԻՄՆԱՐԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

39. Հիմնարկի կառուցվածքը սահմանում և դրա կառավարման լիազորություններն իրականացնում է Հիմնադիրը՝ ի դեմս Հիմնադրի միանձնյա գործադիր մարմնի.

40. Հիմնադրի բացառիկ իրավասությանն են պատկանում՝

- 1) Հիմնարկի ստեղծումը, վերակազմակերպումը և գործունեության դադարեցումը.
- 2) Հիմնարկի կանոնադրության, նոր խմբագրությամբ կանոնադրության, դրանում կատարվող լրացումների ու փոփոխությունների հաստատումը.
- 3) Հիմնարկին հանձնվող (ամրացվող) գույքի չափի և կազմի որոշումը.
- 4) Հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
- 5) Հիմնարկի տնօրենին պաշտոնի նշանակումը և պաշտոնից ազատումը.
- 6) Հիմնարկի կառուցվածքի, հաստիքացուցակի, աշխատողների վարձատրության չափի սահմանումը.
- 7) Հիմնարկի գործունեությունը կանոնակարգող փաստաթղթերի հաստատումը.
- 8) Հիմնարկի ընթացիկ գործունեության վերահսկողությունը.
- 9) Հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանների, կարգադրությունների, հրահանգների, ցուցումների, հանձնարարականների և Հիմնարկի այլ փաստաթղթերի վերանայումը (փոփոխումը, ուժը կորցրած ճանաչելը) և դրա արդյունքում համապատասխան որոշման ընդունումը.
- 10) Հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունների և ստուգման արդյունքների քննարկումը և դրա արդյունքում համապատասխան որոշումների ընդունումը.
- 11) Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքի տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգի սահմանումը, վերահսկողությունն այդ կարգի պահպանման նկատմամբ.
- 12) Հիմնարկի տարեկան հաշվետվությունների և հաշվեկշռի հաստատումը.
- 13) Օրենքով և Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացումը:

41. Հիմնարկի ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է Հիմնարկի տնօրենը, որին պաշտոնի է նշանակում և ազատում է պաշտոնից Հիմնադրի միանձնյա գործադիր մարմինը:

42. Հիմնարկի տնօրենը գործում է ՀՀ օրենսդրության, սույն կանոնադրության, Հիմնադրի իրավական ակտերի և կազմակերպակարգադրական փաստաթղթերի համաձայն և դրանցով իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությանը համապատասխան իր և Հիմնադրի միանձնյա գործադիր մարմնի (նրա կողմից լիազորված պաշտոնատար անձի) միջև կնքված աշխատանքային պայմանագրի հիման վրա:

43. Հիմնարկի տնօրենի տեղակալները, նախակրթարանի (մանկապարտեզի), դպրոցի և սպորտային համալիրի ղեկավարները, գլխավոր հաշվապահը և իրավաբանական ստորաբաժանման ղեկավարը (իրավախորհրդատուն) պաշտոնի են նշանակվում և ազատվում են պաշտոնից Հիմնարկի տնօրենի կողմից՝ Հիմնադրի նախնական համաձայնությամբ:

44. Հիմնարկի տնօրենը՝

1) տնօրինում է Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը (այդ թվում՝ ֆինանսական միջոցները), Հիմնադրի անունից կնքում է պայմանագրեր (այդ թվում՝ աշխատանքային) և կատարում է գործարքներ.

2) սույն կանոնադրությամբ նախատեսված Հիմնարկի գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան՝ Հիմնարկի գործունեության հիմնական ուղղությունների մասին առաջարկություններ է ներկայացնում Հիմնադրին.

3) իր իրավասության սահմաններում առանց լիազորագրի հանդես է գալիս Հիմնադրի անունից, ինչպես նաև՝ Հիմնադրի կողմից լիազորված լինելու դեպքում, տալիս է Հիմնադրի անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով.

4) բանկերում բացում է Հիմնարկի ընթացիկ հաշիվներ.

5) օրենքով, այլ իրավական ակտերով կամ Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, կարգադրություններ, տալիս է Հիմնարկի աշխատողների համար կատարման ենթակա ցուցումներ և վերահսկում է դրանց կատարումը, աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնարկի աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և կարգապահական տույժեր.

6) օրենքին, այլ իրավական ակտերին և (կամ) Հիմնարկի կանոնադրությանը համապատասխան, կատարում է լիազորությունների բաշխում իր տեղակալների միջև, հաստատում է Հիմնարկի կառուցվածքային ստորաբաժանումների կանոնակարգերը և Հիմնարկի աշխատողների պաշտոնեական հրահանգները.

7) կազմում է Հիմնարկի գործունեության մասին հաշվետվությունները, ապահովում է Հիմնարկի գործունեության ստուգման արդյունքներով տրված հանձնարարականների կատարումը.

8) ապահովում է Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքի պահպանությունը.

9) իրականացնում է ՀՀ օրենսդրությամբ և Հիմնարկի կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

45. Հիմնարկի տնօրենը պարտավոր է պատշաճ կատարել Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ, իր և Հիմնադրի միջև կնքված աշխատանքային պայմանագրով նախատեսված պարտականությունները:

Հիմնարկի տնօրենը իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

46. Տնօրենի բացակայության դեպքում, Հիմնադրի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, նրա լիազորություններն իրականացնում է այլ անձ:

47. Ուսումնական մասի պատասխանատուն՝

1) պատասխանատու է կրթահամալիրի ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, ուսումնական ծրագրերի կատարման, դասավանդման որակի և սովորողների՝ կրթական չափորոշիչներով սահմանված գիտելիքների, կարողությունների և հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար.

2) հսկողություն է իրականացնում ուսումնադաստիարակչական աշխատանքի ընթացքի, սովորողների առաջադիմության և վարքի նկատմամբ, կանոնակարգում սովորողների ուսումնական ծանրաբեռնվածությունը.

3) Հիմնարկի տնօրենի հետ համատեղ իրականացնում է Հիմնարկի ուսումնադաստիարակչական աշխատանքների մեթոդական ղեկավարումը, ապահովում է Նախարարության և Հիմնարկի տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող հանձնարարականների կատարումը.

4) կազմում է ուսումնական պարապմունքների դասացուցակը և ուսումնադաստիարակչական աշխատանքների վիճակի մասին հաշվետվություններ.

5) ղեկավարում է առարկայական մեթոդական միավորումների աշխատանքները, ընդհանրացնում և տարածում մանկավարժական աշխատանքի արդյունավետ փորձը, ուսուցիչներին հաղորդակից դարձնում գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին.

6) կազմակերպում է սովորողների ուսումնական պարապմունքների հսկողություն: Ներկայացնում է առաջարկություններ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման ուղղությամբ.

7) ապահովում է սույն կանոնադրությամբ, ներքին իրավական ակտերով և ներքին կարգապահական կանոններով սահմանված պահանջների կատարումը:

48. Հիմնարկում կրթության բնագավառի օրենսդրության պահպանման նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում են Նախարարությունը, «Լիցենզավորման և հավատարմագրման ծառայություն» գործակալությունը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:

49. Հիմնարկի կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու նպատակով, ձևավորվում են խորհրդակցական մարմիններ՝ մանկավարժական խորհուրդ, առարկայական մեթոդական միավորումներ, ծնողական, աշակերտական, հոգաբարձուների խորհուրդներ:

50. Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական կոլեկտիվի առաջին նիստում: Մանկավարժական խորհուրդը ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով, որի լիազորությունները սահմանվում են Խորհրդի ձևավորման կանոնակարգով:

51. Մանկավարժական խորհրդի աշխատանքը ղեկավարում է հանրակրթական դպրոցի պատասխանատուն, որն ի պաշտոնե խորհրդի նախագահն է:

52. Մանկավարժական խորհրդի նիստերն արձանագրվում են:

53. Սպորտային մասի պատասխանատուն՝

1) պատասխանատու է Հիմնարկի սպորտային համալիրի պատշաճ գործունեության համար.

2) ուսումնամարզական խմբերի համալրման ու ուսումնամարզական գործընթացի կանոնավար կազմակերպման համար.

3) մարզումների կազմակերպման ու մարզվողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների առնվազն պարտադիր նվազագույն մակարդակի ապահովման համար:

VI. ԴՊՐՈՑԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

54. Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցներն են՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը, մանկավարժական այլ աշխատողները և վարչական աշխատողները:

55. Հիմնարկի դպրոցում սովորողներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ: Դրանք սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կանոնադրությամբ:

56. Հիմնարկի դպրոցն ապահովում է կրթական ծրագրի կատարման անվտանգ և ապահով պայմաններ, բնականոն աշխատանքային ռեժիմ, բժշկական օգնություն և սպասարկում, ինչպես նաև՝ սովորողների ֆիզիկական զարգացման ու առողջության ամրապնդման համար անհրաժեշտ պայմաններ, ձևավորում է անձնական հիգիենայի և առողջ ապրելակերպի հմտություններ:

57. Յուրաքանչյուր սովորող տարին առնվազն մեկ անգամ անցնում է բժշկական (պրոֆիլակտիկ) հետազոտություն, որն իրականացվում է հանրակրթական դպրոցի բժշկական սպասարկման ծառայության կողմից:

58. Հիմնարկի դպրոցում կարգապահությունն ապահովվում է օրենքով, կանոնադրությամբ և ներքին կարգապահական կանոններով սահմանված կարգով, որոնց կանոնները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով կիրառվում են կարգապահական տույժեր:

59. Մանկավարժական աշխատողի պաշտոն զբաղեցնելու իրավունքը սահմանափակվում է օրենքով:

60. Մանկավարժական աշխատողի իրավունքները և պարտականությունները սահմանվում են օրենքով:

VII. ՀԻՄՆԱՐԿԻՆ ՀԱՆՁՆՎԱԾ (ԱՄՐԱՑՎԱԾ) ԳՈՒՅՔԸ

61. Հիմնարկի գույքը ձևավորվում է Հիմնադրի կողմից Հիմնարկի տիրապետմանը, օգտագործմանը և տնօրինմանը հանձնված (ամրացված) արժեքներից:

62. Հիմնադրի կողմից գույքը Հիմնարկին է հանձնվում (ամրացվում) հանձնման-ընդունման (ամրացման) ակտին համապատասխան և հաշվառվում է Հիմնարկի հաշվեկշռում: Հիմնարկի գույքը հաշվառվում է նաև Հիմնադրի հաշվեկշռում:

63. Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը հանդիսանում է Հիմնադրի

սեփականությունը: Հիմնադիրն իրավունք ունի ցանկացած ժամանակ հետ վերցնել իր կողմից Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքը:

64. Հիմնարկն իրավունք ունի օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում ու կարգով, իր գործունեության նպատակներին և գույքի նշանակությանը համապատասխան, տիրապետել, օգտագործել և տնօրինել իրեն հանձնված (ամրացված) գույքը:

65. Հիմնարկի գույքային իրավունքի օբյեկտներ կարող են հանդիսանալ՝

1) գույքը (ներառյալ դրամական միջոցները) և գույքային իրավունքները.

2) աշխատանքները, ծառայությունները և դրանց արդյունքները.

3) տեղեկատվությունը.

4) ոչ նյութական բարիքները:

66. Հիմնարկի գույքի ձեռքբերման գործառույթներն իրականացվում են Հիմնադրի հաշվին՝ Հիմնադրի կողմից սահմանված կարգով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ այլ իրավական ակտերով:

67. Հիմնարկն իրավունք չունի առանց Հիմնադրի համաձայնության կնքելու Հիմնարկին հանձնված (ամրացված) հիմնական միջոցների օտարման կամ ծանրաբեռնման գործարքներ:

68. Հիմնարկի ֆինանսական միջոցները գոյանում են Հիմնադրի սահմանած կարգով:

69. Հիմնարկի ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

1) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և Հիմնարկի կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

70. Հիմնարկի պահպանման ծախսերի չափը սահմանում է Հիմնադիրը:

VIII. ՀԻՄՆԱՐԿԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

71. Հիմնարկը կարող է վերակազմակերպվել օրենքի կամ Հիմնադրի որոշման հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

72. Հիմնարկի գործունեությունը կարող է դադարել Հիմնադրի որոշմամբ կամ օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով ու կարգով:

73. Հիմնարկի գործունեությունը համարվում է դադարեցված՝ այդ մասին Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրում գրառում կատարելու պահից:

74. Հիմնարկի գործունեությունը դադարելու դեպքում Հիմնարկին հանձնված (ամրացված) գույքի տնօրինման կարգը սահմանվում է Հիմնարկի գործունեությունը դադարելու մասին Հիմնադրի որոշմամբ:

75. Հիմնարկի գործունեությունը դադարելու դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները փոխանցվում են Հիմնադրին: